ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Մոլդովայի Հանրապետություն (Քիշնև) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   - Մարիետա Սարգսյան

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**
   2026 թվականի մարտի 17-ից 19-ը, Մոլդովայի Հանրապետություն, Քիշնև

3. **Հրավիրող կողմը**

   Եվրոպայի խորհուրդ

4. **Գործուղման նպատակը**

   Հանդիսանալով Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կառավարման կոմիտեի անդամ՝ մասնակցել եմ Եվրոպական սոցիալական խարտիային նվիրված բարձրաստիճան համաժողովին:

5. **Քննարկված թեմաները**
   Համաժողովի շրջանակում քննարկվել են Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված սոցիալական իրավունքների արդյունավետ իրականացման, սոցիալական արդարության և հավասարության ապահովման, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգերի զարգացման և դիմակայունության բարձրացմանն առնչվող հարցեր: Անդրադարձ է արվել սոցիալական պաշտպանության համակարգերի թվայնացման հնարավորություններին և մարտահրավերներին, ներառականության ապահովմանը, խոցելի խմբերի պաշտպանությանն ու միջազգային համագործակցության խորացմանը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Մարտի 19-ին կայացած թեմատիկ նիստերի ընթացքում պետությունների ներկայացուցիչների կողմից ներկայացվել են աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում գրանցված բարեփոխումներն ու առաջընթացները, որոնք բխում են Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված սոցիալական իրավունքների արդյունավետ իրականացման, սոցիալական արդարության և հավասարության ապահովման, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգերի կայունության և դիմակայունության բարձրացման շրջանակներից: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սոցիալ-տնտեսական մարտահրավերներին արձագանքելու, խոցելի խմբերի պաշտպանության և ներառական քաղաքականությունների իրականացման անհրաժեշտությանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում ընդունվել է Քիշնևի հռչակագիրը: Թվով երրորդ նախարարական համաժողովը տեղի կունենա 2029 թվականին Պորտուգալիայում՝ ԵՄ նախարարների կոմիտեում Պորտուգալիայի նախագահության ներքո:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկություններ չկան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

24.03.2026